# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Դատական դեպարտամենտի կարիքների համար շինարարական աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/11» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «31» հոկտեմբերի 2019թ.
ժամը՝ 14:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

Գրիգոր Գաբրիելյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի ղեկավար

*հանձնաժողովի անդամներ՝*

Էդգար Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար

Արևիկ Հարությունյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Էրեբունի նստավայրի պատասխանատու

Ավետիք Ավագյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար

*հանձնաժողովի քարտուղար՝*

Արուս Խաչատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԽ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում էր՝

Տիգրան Ստեփանյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետ

**1. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 4-րդ ենթակետով և «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/11» ծածկագրով հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ բաժնով («ԱՌԱՋԻՆ ՏԵՂԸ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ») նախատեսված փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ.**

Վահրամ Կնյազյան ԱՁ-ն, «ԻՐՏԻԳ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում և հրավերով սահմանված կարգով ներկայացրել են հրավերով նախատեսված փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության վերաբերյալ.**

Վահրամ Կնյազյան ԱՁ-ի, «ԻՐՏԻԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

3. Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետով սահմանված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների

կոմիտեի եզրակացությունը՝ Վահրամ Կնյազյան ԱՁ-ի, «ԻՐՏԻԳ» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքը և որակավորումը գնահատվում են բավարար:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**Գնահատող անձնաժողովը որոշեց՝**

1. հաստատել հայտերի գնահատման արդյունքները և
- 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «ԻՐՏԻԳ» ՍՊԸ-ին,
- 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել Վահրամ Կնյազյան ԱՁ-ին,
2. հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է),
3. գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, իրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի նախագահ՝ Գրիգոր Գաբրիելյան

Անդամներ՝ Էդգար Մելքոնյան

Արևիկ Հարությունյան

Ավետիք Ավագյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան